# Արձանագրություն N 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/24» ծածկագրով գնանշման հարցման գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

12 սեպտեմբերի, 2024թ, ժ 16:00,

ք. Գյումրի

«Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ, Շիրակի մարզ,

ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար,

3) Շուշիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ,

4) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

5) Հրաչ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 03.09.2024թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am հասցեում:

1.2 «Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ -ի կարիքների համար **Գյումրի համայնքի Եսայան, Պավլովի, Բաշինջաղյան փողոցներին հարող 0,56 հա մակերեսով տարածքում զբոսայգու ստեղծման և կազմակերպման աշխատանքների** ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/24» ծածկագրով ընթացակարգի համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի | | |
|---|---|---|
| N | Անվանումը | Հասցեն |
| 1. | Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյան | Շիրակի մարզ, ՀՀ, Ք. Գյումրի, Մուսայելյան 34 |
| 2. | «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ | Շիրակի մարզ, ՀՀ, Ք. Գյումրի Կորի 33փ, տ 11 |
| 3. | «ԲԻՍԻՍԻ» ՍՊԸ | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Գետաշեն, Բ թաղամաս, 11-րդ փ , տ2 |

*1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին*

- Առմեփս էլեկտրոնային համակարգում Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի գնման հայտում հայտի ապահովման համար նախատեսված բաժնում կցված է այլ փաստաթուղթ, հայտի ապահովումը բացակայում է:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, մեջբերում եմ՝ «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0*

*1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0*

## 1.6. Մասնակիցների առաջարկած գները

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյան | | «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ | | «ԲԻՍԻՍԻ» ՍՊԸ | | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ | Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն | Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ | Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն | Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ | Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն | ներառյալ ԱԱՀ-ն |
| 1. | Գյումրի համայնքի Եսայան, Պավլովի, Բաշինջաղյան փողոցներին հարող 0,56 հա մակերեսով տարածքում զբոսայգու ստեղծման և կազմակերպման աշխատանքներ | 26 800 000 | 32 160 000 | 27 000 000 | 32 400 000 | 27 900 000 | 27 900 000 | **34 843 446** |

Հանձնաժողովը արձանագրեց՝

- Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի, «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի, «ԲԻՍԻՍԻ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում են:
- Նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը:
- ARMEPS էլեկտրոնային համակարգում Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի ներկայացրած հայտում հայտի ապահովման համար նախատեսված բաժնում կցված է այլ փաստաթուղթ, հայտի ապահովումը բացակայում է: Համակարգում հայտի ապահովման ներկայացման չափորոշիչը պարտադիր է:
- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, մեջբերում եմ՝ «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են իրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:

Հանձնաժողովը որոշեց՝

- Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն:
- Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն: Հաղթող մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը 10 օրացուցային օր է:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին կուղարկվի պայմանագրի նախագիծը, ինչն անհրաժեշտ է 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և ներկայացնել պատվիրատուին: Անհրաժեշտ է նաև սահմանված կարգով ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0*

Հանձնաժողովի նախագահ՝ ................ Մ. Մկրտչյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ................ Կ. Բարսեղյան (ԳՊ/ԲԱ)

................ Շ. Հակոբյան (ԳՊ/ԳԱ)

................ Խ. Սուլթանյան (ԳՊ/ԳԱ)

................ Հ. Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

................ Ա. Սարգսյան (ԳՊ/ՄՀՄ)

Քարտուղար՝